ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԻ ԴՐՎԱԳՎԱԾ ՍԱՓՈՐԻ ՄԱՍԻՆ

1962 թ. աշնանը Նոյեմբերյանի շրջկենտրոնի ծայրամասից՝ հյուսիս-արևելյան ուղղությամբ մոտ 700 մետր հեռավորության վրա, Նոյեմբերյան—Այրում տանող ասֆալտապատ խճուղու աջ կողմում՝ «Հարսնաքարի հողեր» կոչվող հարթավայրում, հիվանդանոցի շենքի հիմքեր փորելու ժամանակ բացվեցին քարարկղջա դամբարաններ։ Հետադայում մեր կատարած հետազոտություններից պարզվեց, որ այդ դամբարանները, որոնց թիվը հասնում էր չորջ հարյուրի, պատկանում են մի ընդարձակ դամբարանադաշտի։ Դամբարանները, որոնք ժամանակի ընթացքում կորցրել են իրենց արտաքին նշանները, գտնվում են միմյանցից 2—4 մետր հեռավորության վրա։ Պեղումների ընթացքում հայտնաբերված հարուստ հուշարձաններն ապացուցում են, որ դամբարանադաշտը պատկանում է ուշ բրոնզի դարին (XIII—VIII դդ. մ. թ. ա.)։

Դամբարանների շարքում իր նյութերով առանձնահատուկ տեղ է դրավում 19-րդ դամբարանը, որը պեղվեց հիվանդանոցի շենքի արևելյան պատից 8 մետր հեռավորության վրա։ Դամբարանն ուղղված էր հյուսիսից-հարավ, ուներ 1,5 մ երկարություն, լայնությունը հասնում էր 83 սմ, իսկ խորությունը՝ 1,60 սմ։ Այստեղ ի տարբերություն մյուս դամբարանների, հանգուցյալի գլխի և ոտքերի մասում սալեր չկային։ Նրա երկու կողմում կային շերտավոր, 85 սմ լայնությամբ երկու սալեր։

Դամբարանի հողի վերևի շերտը փափուկ և փխրուն էր, սակայն որքան խորանում էր դեպի հատակը, այնքան հողը ամրանում, օճառանման և մածուցիկ էր դառնում։ Դամբարանում հայտնաբերվեցին մարտական կառքով դրվագված կավե սափոր, մի քրեղան, 2 գավ, մեկ լայնաբերան բաժակ և երկու բութ կանթերով փոքրիկ կավե աման։

Դամբարանի կենտրոնական մասում հայտնաբերվեցին բրոնզե ճարմանդ, ասեղ, ինչպես նաև պաստայից պատրաստված սպիտակ ու գորշ գույնի փոքր և սարդիոնից ու ապակե պաստայից՝ ավելի խոշոր մեկական հուլունք։

Տասնիններորդ դամբարանում հայտնաբերված երկու քրեղանները, լայնաբերան բաժակը, սև ու մուգ մոխրագույն գավերը պատրաստված են լավ մաղած կավահողից, իսկ բութ բռնակներով, անշուրթ բերանով փոքրիկ կավամանը (հավանաբար աղաման) պատրաստված է ոսկեփայլ կոշտ ավազահատիկներից։

Խուփ բերանով քրեղանի բերանի տրամագիծը 27 սմ է, խորությունը՝ 24 սմ։ Նրա պրոունկից 2 սմ վրա միմյանց զուգահեռ անցնում են խորաքանդակ թեք գծիկներով նախշեր։

Խիստ ջարդված և անվերականգնելի էր մեկ բռնականի ծանծաղ, սև գույնի, դամբարանադաշտում ամենատարածված քրեղանների նման ևս մի քրեղան։ Դամբարանի գլխամասից հայտնաբերված մուգ մոխրագույն գավի վզիկից ձգվում են միմյանց զուգահեռ թույլ նկատելի 3 զարդագծեր։ Նրա բարձրությունը 21,5 սմ է, իսկ կլոր հատակի լայնությունը հասնում է 7,5 սմ։ Ջարդված մյուս գավի բռնակի բեկվող մասը վերջանում է պտուկաձև, բռնակի տակից իրանով անցնում է խորաքանդակ լայն գիծ։ Դամբարանի գլխամասից հայտնաբերված լայնաբերան բաժակը, որի բարձրությունը և բերանի լայնությունը 15 սմ է, նույնպես պատրաստված է դարչնագույն կավահողից։ Նրա բռնակի վերին մասի ուղղությամբ ձգվում են լայն խորաքանդակ գիծ և գոտենման երկու նախշ։

Դամբարանի կենտրոնական մասում հայտնաբերված ամենափոքր կավամանի բարձրությունն է 6 սմ, բերանի լայնությունը՝ 5,4 սմ։ Նրա բերանն ունի անպռունկ հարթ կտրվածք, որը ծածկվել է կափարիչով։ Ամանն ունի մեկական անցքով երկու բութ բռնակներ, որոնց տակից իրանով անցնում են 1 սմ լայնությամբ 3 դոտի։

Հանգուցյալի ոտքերի տակ թաղված միակ կավանոթը մարտակառքով դրվագված սափորն էր, որը Հայաստանում հայտնաբերված հազվագյուտ հուշարձաններից է։ Արևելյան կողային սալաքարի և ծածկասալի կոտրվածքի պատճառով լիովին ջարդվել էր մարտակառքի թափքը և ռազմիկի արձանիկը։ Սափորի փորի պարագիծը 100 սմ է, տրամագիծը՝ 31 սմ, իսկ բերանի լայնության տրամագիծը՝ 10 սմ։ Նա ծածկված էր 20×18×2 սմ մեծությամբ քարե սալիկով։ Ունի անեզր 13 սմ տրամագծով հարթ հատակ։ Սա-



փորը պատրաստված է մաքուր մաղած գորշագույն ավազախառը կավից և տրված է սև փայլ։ Սափորի բերանի շրթից 2 սմ խորությամբ ձրգվում են միմյանցից 5—6 սմ հեռավորությամբ 9 հատ կոճականման պտուկներ։ Նա ունի ուղղանկյունաձև 2 բռնակ, որոնց հակադիր կողմերում դրվագված են հաստ անուրներով լծված 2 վազող ձիեր և նրանց հետապնդող զույգ ձիերով սլացող մարտակառքի պատկերներով քանդակներ։ Մարտակառքի թափքը թեթև է, կարճ, վերջանում է անիվներին հավասար և նախատեսվում է 1—2 ռազմիկի համար։ Նկատելի է, որ թափքը առջևի մասից նույնպես կարճ է։ Թափքի առաջնամասին և անիվներին են հասնում առջևից սլացող ձիերի պոչերը։ Նրա երկարությունը 1 սմ է։ Տասներեք սմ երկարությամբ սոնու երկու ծայրերը անիվներից 2 սմ երկարությամբ դուրս են ցցված։ Առանց ճաղերի, մեկ ամրողջական տախտակից պատրաստված անիվների բարձրությունը հասնում է 3 սմ։ Լծված ձիերի բերանից սկիզբ են առնում հաստ սանձերը, որոնք ձգվում են մինչև պոչերը։ Երկու ձիերն էլ լծված են բաշի կողմից մեկ երկար լծով։

Եթե մարտակառքի ձիերը լծված են բաշի կողմից, ապա նրա առջևից հետապնդվող ձիերը լծված են վզի տակից անուրներ հիշեցնող հաստ լծով։

Անդրադառնալով կավանոթի վրա քանդակված մարտակառքին պետք է նշել, որ այն ունի ընդհանուր նմանություն Ախթալայի բրոնզե գոտու վրա նկարված մարտակառքի[1] և որոշ չափով Լճաշենի առաջին դամբարանաթմբից հայտնաբերված մարտակառքի բրոնզե մոդելին, որոնք, ընդհանուր առմամբ, հիշեցնում են սիրիական և խեթական մարտակառքերը[2]։

Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

---

[1] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван 1964, էջ 139։

[2] Նույն տեղում, էջ 98։